Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<28>> հուլիսի 2021թ. **ք. Մեղրի**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի հարկադիր կատարող արդարադատության կապիտան Լենիկ Պողոսյանս ուսումնասիրելով 21.06.2021թ-ին հարուցված թիվ 07747516 կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 18.06.2021թ-ին տրված թիվ ԵԴ/10094/17/21 կատարողական թերթի համաձայն պետք է Սուրեն Սամսոնի Բոլյանից հօգուտ <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի բռնագանձել 4.671.315 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապանին պատկանող բռնագանձման ենթակա գույք չի հայտնաբերվել և համաձայն <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ի կողմից 15.07.2021թ-ին տրված թիվ Ա-1515/21 գրության՝ պարտապան Սուրեն Բոլյանի պարտավորությունը թիվ ԵԴ/10094/17/21կատարողական թերթի շրջանակում 15.07.2021թ-ի դրությամբ կազմել է 5.229.784 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել 21.06.2021թ-ին հարուցված թիվ 07747516 կատարողական վարույթը 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը կամ պարտապանին 90-օրյա ժամկետում սեփական նախաձեռնությամբ սնանկության հայց ներկայացնել դատարան:

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում: <<Դատական ակտերի հարկադիր կատարման մասին>> ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ **ԼԵՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**